ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի 8-13-ը Իտալիայի Հանրապետություն (Հռոմ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**.
   Զարուհի Բաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Հռոմ, Իտալիայի Հանրապետություն, 8-13 հոկտեմբերի, 2019 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Իտալիայի նախարարների խորհրդի նախագահության հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով վարչություն

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Ընտանիքը որպես սոցիալական քաղաքականության հանգույց» խորագրով աշխատաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Ս.թ. հոկտեմբերի 9-ից 10-ը Հռոմում տեղի ունեցավ «Ընտանիքը որպես սոցիալական քաղաքականության հանգույց» խորագրով աշխատաժողովը, որը համատեղ կազմակերպվել էր Իտալիայի Հանրապետության կառավարության՝ ի դեմս Իտալիայի նախարարների խորհրդի նախագահության հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով վարչության և Եվրոպայի խորհրդի սոցիալական համախմբման եվրոպական հարթակի (PECS) կողմից: Միջոցառմանը մասնակցելու և բացման խոսքով հանդես գալու հրավերը ստացվել էր Իտալիայի հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով նախարարի կողմից:

   Միջոցառման բացմանը ելույթով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը: Բացի Հայաստանից, բացման խոսքով

հանդես եկան նաև Իտալիայի հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով նախարարը, Լիտվայի սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարը, Մալթայի ընտանիքի, երեխաների իրավունքների և սոցիալական համերաշխության հարցերով նախարարը, ինչպես նաև ԵԽ գլխավոր քարտուղարի տեղակալ Գաբրիելա Բատաինի-Դրագոնին: Աշխատաժողովին մասնակցեցին նաև եվրոպական այլ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային փորձագետներ, քաղաքական գործիչներ, գիտնականներ, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցավ 4 աշխատանքային նիստ սոցիալական կարևորագույն թեմաների շուրջ (ընտանիքի հիմնահարցեր, ժողովրդագրություն, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն և նրանց նկատմամբ ընտանեկան բռնության և շահագործման բացառում, մանկական աղքատության վերացում): Նշված թեմաներին առնչվող հարցերի շուրջ կայացան զեկույցներ, քննարկումներ և բարձրաստիճան ինտերակտիվ երկխոսություն:

Աշխատաժողովը լավ հարթակ հանդիսացավ Հայաստանի արձանագրած առաջընթացն ու առաջնահերթությունները միջոցառման թեմաներին առնչվող վերը նշված ոլորտներում ներկայացնելու համար: Միջոցառումը հարմար առիթ հանդիսացավ նաև սոցիալական ոլորտում եվրոպական տարբեր երկրների առաջադեմ փորձին և նորարարական նախաձեռնություններին ծանոթանալու, կառուցողական երկխոսության խթանման, համագործակցության զարգացման և լավագույն փորձի փոխանակման համար:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Ինչպես նշվեց կետ 6-ում, աշխատաժողովին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԱՍՀ նախարար Զարուհի Բաթոյանը: Նախարարը, մասնավորապես, նշեց, որ նման կարևոր միջոցառումները թույլ են տալիս խորապես ուսումնասիրել և կենտրոնանալ գլոբալ կարևորություն ունեցող թեմաների վրա, բացահայտել լավագույն փորձը, քաղված դասերն ու գրանցված հաջողությունները: Նման միջոցառումները նաև արդյունավետ հարթակ են պետությունների կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման խթանման համար՝ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարբեր կենսական ոլորտներում:

Ելույթում ներկայացվեցին միջոցառման քննարկման թեմաների համատեքստում Հայաստանում ընթացող բարեփոխումներն ու նախաձեռնությունները: Վերահաստավեց Հայաստանի պատրաստակամությունն աջակցելու աշխատանքի և զբաղվածության ոլորտներում մարդակենտրոն մոտեցումներին ուղղված համընդհանուր ջանքերին, ազգային և համաշխարհային մակարդակներում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հանրային կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովմանը, ընտանեկան բռնության դեմ պայքարին և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերին:

Անդրադարձ կատարվեց 2018 թվականի թավշյա հեղափոխության արդյունքում Հայաստանի կյանքում և քաղաքական համակարգում տեղի ունեցած կարևոր փոփոխություններին: Շեշտվեց, որ ամբողջ շարժման ընթացքում հայ ընտանիքներն, այդ թվում՝ կանայք և երիտասարդները, որոնք մասնակցում էին ցույցերին, խաղաղության պահապանների դեր կատարեցին և մեծ դեր ունեցան ժողովրդավարական այդ շարժման ոչ բռնի բնույթի երաշխավորման և խաղաղ պայմաններում իշխանափոխության հաջողության գործում:

Ելույթում կարևորվեց միջոցառման քննարկման առարկա հանդիսացող հարցերի համամարդկային բնույթը և դրանց կարևորագույն նշանակությունը քաղաքակիրթ համաշխարհային հանրության համար: Ընդգծվեց, որ միայն միջազգայնորեն ճանաչված նորմերի իրագործման հարցում կառավարությունների ստանձնած պարտավորությունների կատարումը և քաղաքական կամքը կարող են երաշխավորել մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունն աշխարհում:

Ելույթն ամբողջությամբ կցվում է:

Միջոցառմանը քննարկված հարցերն էին. համընդհանուր մարտահրավերների և փոփոխությունների համատեքստում աշխատանք-կյանք հավասարակշռության պահպանում, եվրոպական տարածաշրջանում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ընտանիքակենտրոն քայլերի խրախուսում, բոլոր տեսակի բռնությունների դեմ պայքար, այդ թվում՝ կանանց և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության, վերջիններիս պաշտպանությանն ուղղված արդյունավետ քայլեր, ինչպես նաև մանկական աղքատության նվազեցմանն ուղղված քաղաքականություններ և գործնական լուծումներ:

Միջոցառման շրջանակներում տեղի ունեցան երկկողմ հանդիպումներ Իտալիայի հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով նախարար Ելենա Բոնետիի, Լիտվայի սոցիալական ապահովության և աշխատանքի նախարար Լինաս Կուկուրայտիսի, Մալթայի ընտանիքի, երեխաների իրավունքների և սոցիալական համերաշխության հարցերով նախարար Մայքլ Ֆալցոնի, ինչպես նաև ԵԽ սոցիալական համախմբման եվրոպական հարթակի քարտուղար Մարգարիտա Գալստյանի հետ:

Իտալիայի հավասար հնարավորությունների և ընտանիքի հարցերով նախարար Ելենա Բոնետիի հետ հանդիպման ընթացքում ներկայացվեցին երկու երկրներում գործող երեխաների պաշտպանության համակարգերը, ներառյալ երեխաների խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացման ուղղությամբ ընթացող քայլերը, ինչպես նաև ընտանիքի սոցիալական աջակցության քաղաքականությունը: Քննարկվեցին սոցիալական ոլորտում Հայաստանի և Իտալիայի միջև երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները, մասնավորապես՝ երկկողմ համաձայնագրի կամ փոխըմբռնման հուշագրի ստորագրման հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց աշխատանքներ մեկնարկել այս ուղղությամբ:

Լիտվայի սոցիալական ապահովության և աշխատանքի նախարար Լինաս Կուկուրայտիսի հետ հանդիպման ընթացքում նշվեց աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում երկկողմ բավականին սերտ համագործակցության առկայությունը՝ միաժամանակ կարևորելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության միջև աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրի առավել արդյունավետ կիրարկումը: Ներկայացվեցին Հայաստանի և Լիտվայի սոցիալական նպաստների, մասնավորապես՝ երեխայի նպաստի համակարգերը, ինչպես նաև սոցիալական նպաստների՝ աղքատության կրճատման վրա ունեցած ազդեցության վերաբերյալ Լիտվայում վերջերս լույս տեսած պիլոտային հետազոտության արդյունքները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ լիտվական կողմը Հայաստանին կտրամադրի հետազոտությունը՝ այն մանրամասն ուսումնասիրելու և արդյունքներին ծանոթանալու նպատակով: Մտքեր փոխանակվեցին երկու երկրներում գործող երեխաների որդեգրման

համակարգերի և մեխանիզմների վերաբերյալ, ներկայացվեց Լիտվայի սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության ենթակայությամբ գործող երեխաների իրավունքների պաշտպանության և որդեգրման պետական ծառայության փորձը: Լիտվական կողմը նախարար Բաթոյանին հրավիրեց այցելել Վիլնյուս՝ ծառայության աշխատանքին տեղում ծանոթանալու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փորձի փոխանակման նպատակով:

Մալթայի ընտանիքի, երեխաների իրավունքների և սոցիալական համերաշխության հարցերով նախարարի հետ հանդիպման ընթացքում ներկայացվեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի Մալթայի ազգային մոնիթորինգային մեխանիզմը, քննարկվեցին երկու երկրներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և լիարժեք ներառման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները և գործող համակարգերը, ինչպես նաև համայնքահեն խնամքի կազմակերպմանը, սոցիալական աշխատողների վերապատրաստմանը, համապարփակ սոցիալական նպաստի տրամադրմանն առնչվող և այլ հարցեր: Մալթական կողմը պատրաստակամություն հայտնեց կիսվել սոցիալական ոլորտում իր ունեցած հաջողված փորձով և, ըստ անհրաժեշտության, փորձագիտական աջակցություն տրամադրել Հայաստանին ոլորտում ընթացող բարեփոխումները խթանելու համար:

ԵԽ սոցիալական համախմբման եվրոպական հարթակի քարտուղար Մարգարիտա Գալստյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին սոցիալական ոլորտում ԵԽ այդ կառույցի հետ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանում իրականացնել կարիքների գնահատում՝ ծրագրային առաջնահերթություններն ու ուղղությունները հստակեցնելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման հիմնական արդյունքները եզրակացությունների տեսքով կամփոփվեն եզրափակիչ փաստաթղթում:

Երկկողմ հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները ներկայացված են կետ 7-ում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկում եմ հնարավորության սահմաններում մասնակցել և առավելագույնս օգտագործել նմանատիպ կարևոր հարթակները, այդ թվում նաև այն հանգամանքով պայմանավորված, որ Հայաստանն իր թեկնածությունն է ներկայացրել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի անդամ ընտրվելու համար, և նման հարթակների օգտագործումը կարևոր է մարդու իրավունքներին, այդ թվում նաև սոցիալական, առնչվող տարբեր հարցերի շուրջ Հայաստանի հանձնառությունները վերահաստատելու և երկրի բարձր վարկանիշն ապահովելու նպատակով:

Առաջարկում եմ նաև հնարավոր սեղմ ժամկետներում կյանքի կոչել երկկողմ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, ինչը կխթանի վերը նշված երկրների և Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությունը՝ ի նպաստ երկրում ընթացող սոցիալական ոլորտի բարեփոխումների:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

X _____

16.10.2019թ.